Հաշվետվություն
2026 թվականի հունիսի 22-ից 24-ը Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Նանե Ղազարյան, Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ժնև, հունիսի 22-ից 24-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման հարցերով փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտե (UN-GGIM: Europe):

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման հարցերով փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի (UN-GGIM: Europe) 13-րդ լիագումար նստաշրջանին:

5. **Քննարկված թեմաները.**

Միջոցառման շրջանակում քննարկվել են փորձագետների կոմիտեի ընդհանուր ծրագրի և տարածաշրջանային կոմիտեի պաշտոնական գործունեությանը վերաբերող հարցեր: Շոշափվել են աշխատանքային ծրագրում նոր առաջարկների ընդգրկմանը, հնարավոր բացթողումների վերհանմանը, հավելյալ գործողությունների ներառմանը առնչվող հարցեր: Ընդգծվել է աշխատանքային խմբերի գործունեությանը իրենց ազգային առաջնահերթություններին համապատասխան՝ պետությունների առավել լայն շրջանակի ներգրավվածությունն ապահովելու մեխանիզմների մշակման կարևորությունը: Քննարկվել են նաև ՄԱԿ -ի Կայուն զարգացման նպատակ 11-ի իրականացումն ապահովելու գործընթացում երկրատարածական տեղեկատվության և ինտեգրված հողային կառավարման համակարգերի առանցքային դերակատարությանը վերաբերող հարցեր:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել ռեգիոնալ և գլոբալ տարածական տվյալների ենթակառուցվածքների ինտեգրման հնարավորություններին, տարածական տվյալների հասանելիության ապահովման իրավական հիմքերի մշակմանը, տարածական տվյալների փոխանակման, օգտագործման և փոխգործելիության ապահովման նպատակով միջազգային

ստանդարտներին համապատասխան տվյալների ստանդարտացմանը: Անդրադարձել եմ ՀՀ-ում տարածական տվյալների ինստիտուցիոնալ կառավարման համակարգի զարգացմանը, տարածական տվյալների ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործմանը, Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի և պետական միասնական գեոպորտալի հնարավորությունների ընդլայնմանը, կառավարման արդյունավետ համակարգի ներդրմանը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Մասնակիցներին է ներկայացվել փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի գործունեության զեկույցը, նախորդ նստաշրջանի ընթացքում թարմացված աշխատանքային ծրագրի իրականացման ընթացքը, գրանցված արդյունքները, նախանշվել են հաջորդ տարիների գործունեության ուղղությունները՝ հիմնված առկա առաջնահերթությունների վրա: Ներկայացվել է նաև փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի 2026–2030 թթ. աշխատանքային ծրագիրը: Ընտրվել եմ Գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման հարցերով փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի Գործադիր կոմիտեի անդամ:

8. Ստորագրությունը, ամսաթիվը:

Նանե Ղազարյան

29.06.2026 թ.